ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/10

ք. Երևան 17. 03. 2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ-ն (Գործընկեր-1), ի դեմս տնօրեն Ա. Բաբայանի և «Հիդրոէկ» ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս տնօրեն Հ. Թոքմաջյանի (այսուհետ՝ երկուսը միասին՝ Կատարող), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 07.02.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Շենքերի և շինությունների կառուցման/վերակառուցման աշխատանքների տևողություն» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 5 760 000 (հինգ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը ներառյալ:

4.3 Վճարումը կիրականացվի պայմանագրով նախատեսված աշխատանքի արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց և Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Գործընկեր-1
«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան
ջրային հիմնահարցերի և
հիդրոտեխնիկական ինստիտուտ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 125
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510005005540100
ՀՎՀՀ 01516577

Տնօրեն՝

_____ Ա. Բաբայան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Գործընկեր-2
«Հիդրոէկ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 125/3
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510043038640300
ՀՎՀՀ 00528216

Տնօրեն՝

_____ Հ. Թոքմաջյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
17.03 .2025թ. կնքված
N ՀՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-25/10 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
					հասցեն	Ժամկետը
1	71241200/16	ՀՀ դրամ	5 760 000	1	ՀՀ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 300 օրացուցային օր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Շենքերի և շինությունների կառուցման/վերակառուցման աշխատանքների տևողություն» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքների

1	Իրավիճակի համառոտ նկարագիրը	Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայումս գործում են ՍՆիՊ 1.04.03-85 «Ձեռնարկությունների շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերը» շինարարական նորմերը, գործողի փոխարեն անհրաժեշտ է մշակել արդի, գիտահենք և լավագույն միջազգային փորձին համահունչ նոր ազգային նորմեր, որոնցում արտացոլված կլինեն ՀՀ տարածքում իրականացվող նոր շինարարության, գոյություն ունեցող շենքերի և շինությունների հիմնանորոգման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման), ընդլայնման, արդիականացման ընթացքում կազմակերպման աշխատանքներին և դրանց տևողությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ, որոնք պետք է պահպանվեն օբյեկտների շինարարության բոլոր մասնակիցների կողմից: Նորմատիվ նոր փաստաթղթի մշակումը կարևոր է քաղաքաշինական օբյեկտների իրագործման արդյունավետությունը, տևողության կրճատումը նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովելու համար:
2	Նորմատիվ փաստաթղթերի (ՀՀ շինարարական նորմերի) մշակման (տեղայնացման) աշխատանքների համառոտ բնութագիրը	«Շենքերի և շինությունների կառուցման/վերակառուցման աշխատանքների տևողություն» ՀՀ շինարարական նորմերը անհրաժեշտ է մշակել Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության և ոլորտը կարգավորող փոխկապակցված այլ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նորմերը պետք է բովանդակեն պահանջներ, որոնք բխում են կազմակերպչական, տեխնիկական և տեխնոլոգիական նպատակային համալիր միջոցառումների կիրառումից, որոնք ապահովում են օբյեկտի շահագործումը սահմանված ժամկետներում և պատշաճ որակով: Շենքերի և շինությունների կառուցման/վերակառուցման աշխատանքները պետք է ապահովվեն՝ 1) օբյեկտի շինարարության բոլոր մասնակիցների համաձայնեցված աշխատանքը՝ Պատվիրատուի (գլխավոր կապալառուի) հետ իրենց գործունեության համակարգմամբ, 2) նյութական ռեսուրսների համալիր մատակարարումը՝ հաշվարկված շենքի, շինության, հանգույցի, տեղամասի, սեկցիայի,

		հարկի, հարկաբաժնի, սենքի համար օրացուցային գրաֆիկներով նախատեսված ժամկետներում, 3) շինարարական, մոնտաժային ու հատուկ շինարարական աշխատանքների կատարումը տեխնոլոգիական հաջորդականության պահպանմամբ և տեխնիկապես հիմնավորված համատեղմամբ, 4) անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը, 5) շրջակա միջավայրի պահպանության պահանջների ապահովումը: Շինարարական նորմերն անհրաժեշտ է մշակել. - ՀՀ ստանդարտացման փաստաթղթերի ազգային համակարգի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, - քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան՝ առաջնահերթ կիրառելով քաղաքաշինության ոլորտում Եվրամիության (այդ թվում՝ ԵԱՏՄ) երկրների փորձը, նորմատիվ փաստաթղթերն ու ստանդարտները, - 2011 թվականի մարտի 9-ին Եվրամիության խորհրդի կողմից ընդունված N305/2011/EEC կանոնակարգով սահմանված շինարարական արտադրանքի անվտանգության պահանջների շրջանակներում:
3	Նորմատիվ փաստաթղթերի (ՀՀ շինարարական նորմերի) մշակման (տեղայնացման) հիմնավորումը և պահանջները	Հիմնավորում ՀՀ 2025 թվականի պետական բյուջե, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, 2011 թվականի մարտի 9-ին Եվրամիության խորհրդի կողմից ընդունված N305/2011/EEC կանոնակարգի պահանջներ, ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագիր, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագիր, ԵՄ-Հայաստան խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի դրույթներ, Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցելու հետ կապված մարտահրավերներ: Նորմատիվ փաստաթղթին առնչվող հիմնական նորմատիվ իրավական ակտերը - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք - «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, - ՀՀ կառավարության 25.12.2014թ N 1504-Ն որոշում՝ «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին», - ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշում՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ», - ՀՀ կառավարության 16.02.2006թ N 392-Ն որոշում՝ «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգ», - ՀՀ քաղաքաշինության նախարարի 22.05.2023թ «ՀՀՇՆ 30-01-2023 N04-Ն հրաման՝ «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» , - ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թ N253-Ն հրաման՝ «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ N 43-Ա հրաման՝ ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու»,

		- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N102-Ն հրաման՝ ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր», - ՀՀ քաղաքաշինության նախարարի 24.03.2014թ N 87-Ն հրաման՝ «ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում.Հիմնական դրույթներ» - ՀՀ քաղաքաշինության նախարարի 16.06.2016թ N 120-Ն հրաման «ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն», - ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ N 78-Ն հրաման՝ «ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.11.2017թ N128-Ն հրաման՝ «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին», - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 21.06.2022թ N12-Ն հրաման՝ «ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում», - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022թ N17-Ն հրաման՝ «ՀՀՇՆ 13.01-2022 «Գեոդեզիական աշխատանքները շինարարությունում», - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.08.2022թ N 21-Ն հրաման՝ «ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկա շինարարությունում», - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 09.02.2023թ N 09-Ա հրաման՝ «Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների կառուցման (այդ թվում՝ վերակառուցման, հիմնանորոգման, արդիականացման, վերազինման, ընդլայնման, քանդման կամ ապամոնտաժման) աշխատանքներ կատարողների և տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցողների նկատմամբ՝ շինարարական աշխատանքների ընթացքում նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանման, հայտնաբերված խախտումների և թերությունների համար պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ մեթոդական խորհրդատվության դրույթները» - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 03.11.2022թ N26-Ն հրաման՝ ՀՀՇՆ 12-01-2022 «Նախագծային աշխատանքների տևողության նորմեր»
4	Նորմատիվատեխնիկական փաստաթղթի կազմը, բովանդակությունը, կառուցվածքը (այդ թվում մշակման ընթացակարգը)	Շինարարական նորմերի մշակման ընթացքում անհրաժեշտ է դիտարկել 2020-2024թթ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տարբեր հրամաններով հաստատված և arlis.am կայքում հրապարակված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ձևակերպման, դրանց կառուցվածքի համարակալման հիմնական պահանջները: Շինարարական նորմերի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով (հաջորդականությամբ). ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ Կատարողի կողմից անհրաժեշտ ելակետային տվյալների հավաքագրում և Նախագծի առաջին խմբագրության մշակում և ներկայացում Պատվիրատուին:

		ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ Պատվիրատուն Նախագծի առաջին խմբագրության վերաբերյալ շահագրգիռ մարմինների առաջարկություններն ու դիտողությունները տրամադրում է Կատարողին: Կատարողը Նախագծի վերաբերյալ Պատվիրատուի կողմից ներկայացված շահագրգիռ մարմինների առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակում է փաստաթղթի նախագիծը և առաջարկությունների ու դիտողությունների (կարծիքների) ամփոփագրի (առաջարկների ընդունման կամ չընդունման) հետ համատեղ լրամշակված նախագիծը ներկայացնում է Պատվիրատուին: ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՄՇԱԿՈՒՄ Պատվիրատուն լրամշակված Նախագիծը (երկրորդ խմբագրություն) տեղադրում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի www.minurban.am և իրավական ակտերի նախագծերի հրապարակման www.e-draft.am կայքերում՝ հանրային քննարկման նպատակով: Նախագծի երկրորդ խմբագրության վերաբերյալ շահագրգիռ մարմինների առաջարկություններն ու դիտողությունները Պատվիրատուն հավաքագրում և տրամադրում է Կատարողին: Կատարողը շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա իրականացնում է Նախագծի վերջնամշակում և ներկայացնում Պատվիրատուին: ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ Նախագծի վերաբերյալ տարաձայնությունների առկայության դեպքում՝ դրանց վերացման և փաստաթղթի ընդունման վերաբերյալ համապատասխան վերջնական որոշման կայացման նպատակով Պատվիրատուն կազմակերպում է լրացուցիչ քննարկում, որի արդյունքները ամփոփվում են Կատարողի կողմից: Նախագծի ներկայացման վերջնաժամկետ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 300 օրացուցային օրը՝ որից 45 օրը Պատվիրատուի կողմից նախատեսվում է նախագիծը շահագրգիռ մարմիններ շրջանառելու համար: Նախագծի ֆինանսավորման համար հիմք է հանդիսանում ՀՀ արդարադատության նախարարության պետական-իրավական փորձաքննության եզրակացությունը:
5	Այլ պահանջներ և պայմաններ	ՎԵՐՋՆԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ ➢ Նախագծի վերջնամշակված փաթեթը ներկայացվում է Պատվիրատուին փաստաթղթային տարբերակով՝ 1-ական օրինակ և էլեկտրոնային կրիչով, հայերեն, անգլերեն և ռուսերեն: Կից ներկայացվում են (մեկական օրինակ). 1. Նախագծի մշակման հիմնավորումը՝ Նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև օտարերկրյա պետությունների համապատասխան նորմերի և ստանդարտների հետ փաստաթղթի համադրելիության արդյունքները, 2. Հանրային քննարկումների, շահագրգիռ պետական մարմինների և մասնագիտացված կազմակերպությունների հետ Նախագծի քննարկման արդյունքներով կազմված կարծիքների ամփոփաթերթը, ուղեկցող և պատասխան գրությունների (առաջարկությունների և դիտողությունների) պատճենները, առաջին և վերջին խմբագրությամբ Նախագծի տարբերակները,

		3. Նախագծի քննարկման համար կազմակերպված խորհրդակցությունների արձանագրությունների պատճենները (եթե այդպիսիք առկա են): ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Աշխատանքների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունների ներկայացում ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ առնվազն 30 օրացուցային օր պարբերականությամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Գործընկեր-1
«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան
ջրային հիմնահարցերի և
հիդրոտեխնիկական ինստիտուտ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 125
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 15100005005540100
ՀՎՀՀ 01516577

Տնօրեն՝

_____ Ա. Բաբայան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Գործընկեր-2
«Հիդրոէկ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 125/3
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510043038640300
ՀՎՀՀ 00528216

Տնօրեն՝

_____ Հ. Թոքմաջյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
17.03.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/10 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ. ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/16	«Շենքերի և շինությունների կառուցման/վերակառուցման աշխատանքների տևողություն» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	5 760 000	5 760 000	5 760 000	5 760 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Երիցազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Գործընկեր-1
«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան
ջրային հիմնահարցերի և
հիդրոտեխնիկական ինստիտուտ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 125
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510005005540100
ՀՎՀՀ 01516577

Տնօրեն՝

_____ Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Գործընկեր-2
«Հիդրոէկ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 125/3
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510043038640300
ՀՎՀՀ 00528216

Տնօրեն՝

_____ Հ. Թոքմաջյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
17.03.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/10 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.S.	Կ.S.

Հավելված N 3.1
17.03.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/10 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4.2
«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/10» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

Ք. Երևան «14» մարտի 2025 թ.

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊ Ընկերությունն, ի դեմս տնօրեն՝ Արմեն Բաբայանի /ն/ք 014420863, տրված 13.01.2023թ., 011-ի կողմից որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, «Հիդրոէկ» ՍՊ Ընկերությունն, ի դեմս տնօրեն՝ Հովհաննես Թոքմաջյանի /անձնագիր AV0662560, տրված 07.03.2023թ., 010-ի կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա և /միասին այսուհետ՝ Ընկերություններ/, սույնով միակողմանի սահմանում են հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/10 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերությունների հասցեն, բանկային վավերապայմանները

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ	«Հիդրոէկ» ՍՊԸ
ք.Երևան, Ա. Արմենակյան 125/3	ք.Երևան, Ա. Արմենակյան 125/3
ՀՎՀՀ 01516577	ՀՎՀՀ 00528216
«Արարատբանկ» ԲԲԸ	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/հ 1510005005540100	Հ/հ 1510043038640300
Տնօրեն՝ Արմեն Բաբայան	Տնօրեն՝ Հովհաննես Թորքմաջյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

14 մարտի 2025թ.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "14" մարտի 2025թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊ Ընկերություն և «Հիդրոէկ» ՍՊ Ընկերություն	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Արարատբանկ» ԲԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ՝ հ/հ 1510005005540100, «Հիդրոէկ» ՍՊԸ՝ հ/հ 1510043038640300,	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ՝ 01516577, «Հիդրոէկ» ՍՊԸ՝ 00528216,	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 700000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ (AMD)	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /Ա. Բաբայան/ /Հ.Թոքմաջյան/ 21.բ. Կ.Տ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Հավելված N 5.1
«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/10» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

Ք. Երևան «14 » մարտի 2025 թ.

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊ Ընկերությունն, ի դեմս տնօրեն՝ Արմեն Բաբայանի /ն/ք 014420863, տրված 13.01.2023թ., 011-ի կողմից որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, «Հիդրոէկ» ՍՊ Ընկերությունն, ի դեմս տնօրեն՝ Հովհաննես Թոքմաջյանի /անձնագիր AV0662560, տրված 07.03.2023թ., 010-ի կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա և /միասին այսուհետ՝ Ընկերություններ/, սույնով միակողմանի սահմանում են հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/10 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների

համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ

ք.Երևան, Ա. Արմենակյան 125/3

ՀՎՀՀ 01516577

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/հ 1510005005540100

Տնօրեն՝ Արմեն Բաբայան

(ստորագրություն)

Կ.Տ.

14 մարտի 2025թ.

«Հիդրոէկ» ՍՊԸ

ք.Երևան, Ա. Արմենակյան 125/3

ՀՎՀՀ 00528216

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/հ 1510043038640300

Տնօրեն՝ Հովհաննես Թոքմաջյան

(ստորագրություն)

Կ.Տ.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "14" մարտի 2025թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություններ՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊ Ընկերություն« և Հիդրոէկ» ՍՊ Ընկերություն	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Արարատբանկ» ԲԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ՝ Հ/h 1510005005540100, «Հիդրոէկ» ՍՊԸ՝ Հ/h 1510043038640300	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ՝ 01516577, «Հիդրոէկ» ՍՊԸ՝ 00528216	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900008000664	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1050000 (մեկ միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ (AMD)	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /Ա. Բաբայան/ /Հ.Թոքմաջյան/ 21.բ. Կ.Տ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.